

# ՍՈՒՐ ՎԱՐԱԿԱՅԻՆ ԼՈՒԾՈՎ ԸՆԹԱՑՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՄԵԾԱՀԱՍԱԿ ՊԱՅԻՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## **Ամփոփում**

### **Նպատակ**

Ուղեցույցը տրամադրում է սուր վարակային լուծով ընթացող հիվանդությունների արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել սուր վարակային լուծով ընթացող հիվանդություններով մեծահասակ պացիենտների վարման և բուժման արդյունքները:

### **Մեթոդաբանություն**

Սույն Ուղեցույցը մշակվել է ՄՈՒ Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի աշխատակիցների և «Նորք» ԻԿՀ բժիշկների կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել Գաստրոէնտերոլոգիայի ամերիկյան քոլեջի աշխատանքային խմբի կողմից մշակված և Գաստրոէնտերոլոգիայի ամերիկյան ամսագրում 2016թ. հրատարակված “ Սուր վարակային լուծով ընթացող հիվանդությունների ախտորոշման, բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույց”-ը “ACG Clinical Guideline: Diagnosis, Treatment, and Prevention of Acute Diarrheal Infections in Adults”: Տեղեկատվության որակը գնահատելիս և խորհուրդների ուժը որոշելիս հիմք է ընդունվել խորհուրդների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը [Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE]: Ուղեցույցի յուրաքանչյուր բաժին կազմված է առանցքային խորհուրդներից և ապացույցի սեղմագրից: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

### **Արդյունքներ**

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա Ուղեցույցում լուսաբանվել են լուծի սահմանումները, համաճարակաբանության, ռիսկի գործոնների, ախտորոշման, կլինիկական պատկերի, մոնիտորինգի, բուժական միջամտությունների և ելքերի հիմնահարցերը:

### **Քանայի բառեր**

*Վարակային ծագման լուծ, ապացուցողական բժշկություն, գաստրոէնտերիկ, ջրային լուծ, արյունային լուծ, հեմոլիտիկ-ուրեմիկ համախտանիշ, ճանապարհորդների լուծ*

### **Պատասխանատու համակարգող**

Ասոյան Ա.Վ. բ.գ.թ., ՀՀ ԱՆ գլխավոր վարակաբան, «Նորք» ԻԿՀ տնօրեն, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի վարիչ

### **Աշխատանքային խմբի անդամների անվանացուցակ**

- Հովհաննիսյան Ա.Հ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դասախոս, CH2M հայաստանյան գրասենյակում կլինիցիստների դասընթացի համակարգող:
- Մկրտչյան Ա.Հ., Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դասախոս, «Նորք» ինֆեկցիոն Կլինիկական Հիվանդանոցի բժշկ-վարակաբան
- Ապրեսյան Հ.Վ., Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դասախոս, «Նորք» ինֆեկցիոն Կլինիկական Հիվանդանոցի 1-ին բաժանմունքի վարիչ

- Դավիդյանց Մ.Վ., Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դասախոս, «Նորք» ինֆեկցիոն Կլինիկական Հիվանդանոցի բժշկ-վարակաբան
- Ասոյան Վ.Ա., բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դոցենտ, «Նորք» ինֆեկցիոն Կլինիկական Հիվանդանոցի 6-րդ բաժանմունքի վարիչ

**Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Պատասխանատու կարգավորողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են իրենց շահերի բախման բացակայության մասին: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը չի ունեցել և ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

**Շնորհակալական խոսք**

Պատասխանատու համկազմողը իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր այնդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին, հատկապես՝ «Վարդանանց» Նորարարական բժշկության կենտրոնի տնօրեն Հարություն Մանգոյանին:

**Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումները ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում:**

## ***Բովանդակություն***

Նախաբան

Տեղկատվության որնոման և գնահատման մեթոդաբանություն

Սահմանումներ

Համաճարակաբանություն և հանրային առողջություն

Ախտորոշում

Բուժում

Առկա ախտանիշների գնահատում

Կանխարգելում

Գրականության ցանկ

Հավելված 1. Խորհուրդների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ

Հավելված 2. Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

Հավելված 3. Վարակային ծագման կասկածով սուր լուծով մեծահասակ պացիենտի վարման ընթացակարգ

Հավելված 4. Աղիքային պաթոգենների հայտնաբերման FDA-ի կողմից հաստատված լաբորատոր թեստեր և սուր լուծերի դեպքում ցուցված հակաբիոտիկներ

## ***Հապավումներ***

ԻՖԱ՝ իմունոֆերմենտային անալիզ

ՀՈԻՀ՝ հեմոլիտիկ ուրեմիկ համախտանիշ

ՀՎԿԿ՝ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն

ՃԼ՝ ճանապարհորդների լուծ

ՊԲՎՓ՝ պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկումներ

ՍՎԼԸՀ՝ սուր վարակային լուծով ընթացող հիվանդություններ

ORS՝ oral rehydratation solution

## **Նախաբան**

Սուր վարակային լուծով ընթացող հիվանդությունները [ՍՎԼԸՀ] կարևորագույն առողջապահական խնդիր են ամբողջ աշխարհում: Հաճախ հանդիպող վարակների բուժման համար բազմապիսի հակաբակտերիալ և ոչ հակաբակտերիալ պրեպարատներ են նշանակվում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն էր առաջացել ստեղծել և տարածել տեղեկատվություն սուր վարակային լուծով ընթացող հիվանդությունների բուժման, ախտորոշման, կանխարգելման և հետագա հսկողության վերաբերյալ: Տվյալ կլինիկական ուղեցույցում հեղինակները ներկայացրել են լուծով ընթացող հիվանդությունների բուժման, ախտորոշման, կանխարգելման և հետագա հսկողության՝ ապացուցողական բժշկության վրա հիմնված մոտեցումները: Սուր վարակային լուծով ընթացող հիվանդությունները հոսպիտալացման, պոլիկլինիկական այցերի և կյանքի որակի կորստի հիմնական պատճառներից են, ինչպես տեղային բնակչության, այնպես էլ ճանապարհորդների շրջանում: Ըստ ԱՄՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի ԱՄՆ-ում տարեկան գրանցվում է ՍՎԼԸՀ-ի 47,8 մլն դեպք, որն առողջապահական տնտեսությանը 150 մլն ամերիկյան դոլարի վնաս է հասցնում [1,2]: ՀՀ-ում, ըստ «Առողջություն և առողջապահություն» վիճակագրական տարեգրքի, միայն 2015թ. ընթացքում գրանցվել է վարակային լուծերի 12268 դեպք, որից 1881-ը՝ բակտերիալ դիզենտերիա և 1-ը՝ որովայնային տիֆ: Վարակային ծագման լուծով ընթացող հիվանդությունները սովորաբար զուգորդվում են այլ կլինիկական ախտանիշներով, ինչպիսիք են սրտխառնոցը, փսխումը, որովայնի ցավերը, վրնածությունը, տենդը, կղանքում արյան պարունակությունը, նքոցները և այլն: Սուր վարակային դիարեաները հաճախ դիտվում են որպես գաստրոէնտերիտ, այն դեպքում, երբ որոշ սուր գաստրոինտեստինալ վարակներ կարող են ընթանալ առավելապես փսխումներով և լուծի բացակայությամբ կամ թեթև արտահայտվախ լուծով: Տվյալ ուղեցույցն ուղղորդում է սուր գաստրոինտեստինալ վարակների ախտորոշման, վարման և կանխարգելման մոտեցումներ ընտրելիս՝ առաջնակիորեն իմունոկոմպետենտ մեծահասակ հիվանդների շրջանում, այն չի ներառում *Clostridium difficile*-առցացված վարակները, որոնք առանձին ներկայացված են ACG մեկ այլ

կլինիկական ուղեցույցում [3], որն արդեն փոխարինել է նախկինում հրատարակված նունյանուն ուղեցույցերին [4,5,6]: Տվյալ ուղեցույցը բաղկացած է 5 մասերից՝ ներառելով համաճարակաբանություն և հանրային առողջություն, ախտորոշում, բուժում, առկա ախտանիշների գնահատում և կանխարգելում:

### **Տեղեկատվության որնոման և գնահատման մեթոդաբանություն**

Սույն Ուղեցույցը մշակվել է Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի աշխատակիցների և «Նորք» ԻԿՀ բժիշկների կողմից: Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում MEDLINE, PubMed, Cochrane library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարաններում: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն, ապացույցների ուժի և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել Գաստրոէնտերոլոգիայի ամերիկյան քոլեջի աշխատանքային խմբի կողմից մշակված և Գաստրոէնտերոլոգիայի ամերիկյան ամսագրում 2016թ. հրատարակված “ACG Clinical Guideline: Diagnosis, Treatment, and Prevention of Acute Diarrheal Infections in Adults”: Տեղեկատվության որակը գնահատելիս և խորհուրդների ուժը որոշելիս հիմք է ընդունվել խորհուրդների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը [Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE] [7,8]: Ուղեցույցի յուրաքանչյուր բաժին կազմված է առանցքային խորհուրդներից և ապացույցի սեղմագրից: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց

շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

### **Սահմանումներ**

Սուր լուծը սահմանվում է որպես աղիների գործունեության հաճախացում, որի տևողությունը մինչև 14 օր է: Մեկ այլ սահմանումով սուր լուծ համարվում է 24 ժամվա ընթացքում 3 և ավել անգամ ջրիկ կղանքով դեֆեկացիան:

Պերսիստող լուծը բնորոշվում է որպես 14-30 օր տևողությամբ լուծ:

Քրոնիկ լուծ համարվում է 1 ամսից ավել պահպանվող լուծը:

### **Համաճարակաբանություն և հանրային առողջություն**

#### *Խորհուրդ*

1. Այն դեպքերում, երբ առկա է պացիենտի կողմից վարակի տարածման կամ ենթադրյալ բռնկման բարձր ռիսկ, ախտորոշման համար անհրաժեշտ է հնարավորության դեպքում կիրառել կղանքի բակտերիաբանական կամ ցանքս-անկախ հետազոտություններ [խիստ խորհուրդ, ապացույցի ցածր մակարդակ]:

#### ***Ապացույցների համառոտ ակնարկ.***

ԱՄՆ-ում սուր լուծի [ներառյալ վարակային և ոչ վարակային ծագման] տարածվածությունը նկարագրող հրատարակումները, անսպասելիորեն, բավականին քիչ էին: 1998թ. Մենդային վարակների ակտիվ հսկողության համացանցը [FoodNet] իրականացրեց ՊԲՎՓ հանրային հետախոսային հետազոտություն, որին մասնակցեցին 12,755 մարդ (միջին տարիքը 40տ.) [9]: Ընդհանուր առմամբ, հարցվածների 6% նշել է, որ հարցմանը նախորդաց 4 շաբաթվա ընթացքում ունեցել է սուր լուծ [ընդհանուր տարեկան ցուցանիշը՝ 0.72 դեպք/մարդ/տարի; 15–24, 1.1

դեպք/մարդ/տարի; 25–44, 1.7 դեպք/մարդ/տարի; 45–64, 1.2 դեպք/մարդ/տարի]․ Հաջորդող հետազոտությունում 3,568 անձինք (միջին տարիքը 51) ռանդոմային կերպով հարցվել են նախորդ 7 օրվա կամ 1 ամսվա հիվանդության մասին, պարզվել է, որ կրկնակի հեռախոսազանգերը սխալ գնահատման պատճառ են հանդիսացել [10]․ Յոթօրյա ներգործության պատուհան կիրառելով, սուր լուծերի տարածվածությունը դարձավ 1.6 դեպք/մարդ/տարի, ի տարբերություն 0.9 դեպք/մարդ/տարի, երբ հարցվում էր նախորդ 1 ամսվա համար։ Այլ կանադական և արևմտյան եվրոպական հետազոտություններով տարեկան դեպքերը տատանվել են 0.1 - 3.5 դեպք/մարդ/տարի [11]․ Մասնավորապես շեշտելով վարակային ծագման սուր լուծերը, 2011թ․ ՀՎԿԿ-ը վերանայել է վիրուսային, բակտերիալ և պարազիտար ծագման սուր գաստրոէնտերիտների հաշվարկները [1,2]։ Հիմնվելով էմպիրիկ մոդելավորման ակտիվ, պասիվ և բռնկումային հսկողության տվյալների վրա ԱՄՆ-ում տարեկան գրանցվում է մոտավորապես 47,8մլն սննդի հետ ասոցացված հիվանդություն։ Ավելին, հաշվարկված է, որ 31 հիմնական հարուցիչներ պատճառ են հանդիսանում 9,4մլն լուծով ընթացող հիվանդությունների դեպքերի, 55,961 հոսպիտալացման և 1,351 մահվան դեպքերի։ Ի լրումն վերը նշվածի, չճշտված հարուցիչները պատճառ են հանդիսանում 71,878 հոսպիտալացման և 1,686 մահվան դեպքերի՝ բերելով մոտ 38,4մլն ընտանեկան վարակների։ Մոտ 44մլն ամերիկյան բնակիչ 2014թ․-ին ճանապարհորդել է ոչ-կանադական և ոչ-եվրոպական երկրներ, ինչը հանգեցրել է 4-17մլն ճանապարհորդների լուծի՝ ճԼ, դեպքերի [12,13]։ Սուր լուծերի կարևորագույն նշանակությունից բացի, վերջերս մեծ ուշադրության է արժանանում քրոնիկ գաստրոինտեստինալ պաթոլոգիան՝ ներառելով ռեակտիվ արթրիտները, ՀՈՒՀ-ը, Գիյեն-Բարի համախտանիշը և այլն [14–20]․ Սուր և քրոնիկ հիվանդությունների հետ կապված ընդհանուր ծախսերը գերազանցում են 145 մլրդ ԱՄՆ դոլարը [21–23]։

Վերը քննարկվածի լուսաբանումից պարզ է դառնում սուր լուծով ընթացող հիվանդությունների կարևորագույն դերը հանրային առողջապահության մեջ և կանխարգելիչ միջոցառումների անհրաժեշտությունը։ Չնայած ուղեցույցը



հիմնականում ուղղված է անհատի մոտ ՍՎԼԸՀ-ի ախտորոշման, բուժման և կանխարգելման հիմնահարցերին, սակայն շեշտելով անձին մենք հասնում ենք հարության առողջությունը բարելավելուն: ՍՎԼԸՀ-ի շրջանակներում հանրային առողջության հսկողությունը ներառում է վարակի հսկողություն, հակամանրէային հսկողություն, բռնկումների արագ արձագանքում, ինչպես նաև ջրի և սննդի անվտանգության միջոցառումներ [24]: Անհատական հիվանդ-բժիշկ կապը ապահովում է կարևորագույն ներուժ, որի վրա կառուցվում են այդ հսկողության ռազմավարությունների հաջողությունը: Ներկայումս առկա են հիվանդության իրական տարածվածության հետ կապված անճշտություններ և բացթողումներ, ինչը պայմանավորված է հիվանդությունների հաղորդման համակարգի անլիարժեքությամբ [2,25]: Այդ անլիարժեքության հետ կապված կարևորագույն բաղկացուցիչներն են բուժհաստատությունները և պաթոգենի ֆռակցիաները որոշող հաստատությունները [25]: Գնահատման բարելավումը, որը պահանջվում է կարելու քաղաքական որոշումներ կայացնելիս, կունենա առավելություններ ավելի լավ տեղեկատվություն ստանալու արդյունքում: Բռնկումների հետազոտման տեսանկյունից ցանքսի վրա հիմնված հետազոտությունը և հաղորդումն անհրաժեշտ է՝ հարուցչի շտամը, սերոտիպը, վիրուլենտությունը, զգայունությունը տարբերակելու համար առանձին դեպքերում [26]: Ներկայացված համացանցերը, ինչպիսիք են FoodNet և Pulsenet ապացուցել են ակտիվ հսկողության կարևորությունը յուրահատուկ հիվանդությունների, սննդի անվտանգության ռազմավարության կարևորության և լայնածավալ բռնկումների առումով [27]: Միևնույն ժամանակ, տարաբնույթ լաբորատոր հետազոտությունները և նորագույն մեթոդների կիրառությունը ո՛չ կիրառելի են, ո՛չ ծախսարդյունավետ սուր լուծով յուրաքանչյուր պացիենտի դեպքում կիրառելու համար [28]: Որևիցե պաշտոնական հրատարակություն ծախսարդյունավետության օպտիմիզացիայի վերաբերյալ առկա չէ: Այնուամենայնիվ, հանրային առողջության հիմնարարները խստորեն աջակցում են առանձին հիվանդների հետազոտմանը և հաղորդմանը մի շարք դեպքերում, որոնք են ՍՎԼԸՀ բռնկում սննդի ոլորտի աշխատակիցների, բուժաշխատողների շրջանում, մանկապարտեզներում, ծերանոցներում, ինստիտուցիոնալ

հաստատություններում [3]: Բացի այդ, եթե հետազոտությունը կատարվում է առանձին կլինիկական նպատակների համար, ապա այդ թեստերի արդյունքները պետք է ներկայացվեն հանրային առողջապահական մարմիններին՝ համաձայն հաղորդման միջոցառումների վերաբերյալ կամավոր կամ պարտադիր պետական պահանջների: Եվ վերջապես, կլինիկական լաբորատորիաներում ցանքս-անկախ մեթոդների արագ աճող կիրառությունը մտահոգության առիթ է հանրային առողջության տեսակետից [26]. Ներկայիս հանրային առողջության և հսկողության ռազմավարությունը հիմնված է իզոլատների վերականգման, նմուշների պրեզերվացիայի և կլինիկական լաբորատորիաների հետ համագործակցության վրա: Չնայած ցանքս-անկախ մեթոդները տրամադրում են հարուցչի անջատման ավելի զգայուն հնարավորություններ, սակայն այդ պարագայում տուժում է հարուցչի տիպավորումը, ինչը կարևոր է կայունության մշտադիտարկման և բռնկումների հետազոտության առումով: Այսպիսով, հանրային առողջությունը բարելավելու նկատառումներով ցուցված է կիրառել ցանքս և ցանքս-անկախ ախտորոշիչ մեթոդներ, որոնց տվյալները լրացնում են մեկը մյուսին:

## ***Ախտորոշում***

### *Խորհուրդ*

**2. Հնարավորության առկայության դեպքում պետք է կիրառվեն կղանքի ախտորոշիչ թեստեր, դիզենտերիայի, միջինից ծանր հիվանդության և 7 օրից ավել տևող ախտանիշների դեպքում՝ հիվանդության պատճառը պարզելու և յուրահատուկ բուժում նժանակելու համար [խիստ խորհուրդ, ապացույցի շատ ցածր մակարդակ]:**

**3. Ախտորոշման դասական մեթոդները [բակտերիաբանական ցանքս, մանրադիտում հատուկ ներկման առկայությամբ կամ բացակայությամբ, իմունոֆլուրեսցենցիա, անտիգենի հայտնաբերում] անլիարժեք են ՍՎԼԸՀ-ի մեծ մասի պատճառագիտությունը բացահայտելու առումով: Եթե առկա է, կարելի է**

**առնվազն որպես դասականին լրացնողմեթոդ կիրառել Սննդի և Դեղերի Ադմինիստրացիայի կողմից հաստատված ախտորոշիչ մեթոդներից մեկը [խիստ խորհուրդ, ապացույցի ցածր մակարդակ]:**

**4. Ներկայումս հակաբիոտիկների նկատմամբ զգայունության որոշման թեստի կիրառումը անհատի մոտ լուծի վարման նպատակով խորհուրդ չի տրվում [խիստ խորհուրդ, ապացույցի շատ ցածր մակարդակ]:**

***Ապացույցների համառոտ ակնարկ.***

Լյանորեն ընդունված այն կարծիքը, որ սուր ջրային լուծերի դեպքում անհրաժեշտությունչկա կատարել յուրահատուկ հետազոտություններ, քանի որ դրանք մեծամասամբ ինքնալավացող հիվանդություններ են, կարող է խոչընդոտել կանխարգելման հնարավորությունների կիրառմանը և յուրահատուկ բուժման տրամադրմանը՝ բերելով համապատասխան հետևանքների [29]: Պատմական ուղեցույցերում [ACG, IDSA] ախտորոշիչ թեստավորման խորհուրդները շատ սահմանափակ են ներկայիս նորարարական ախտորոշիչ և բուժիչ հնարավորությունների պայմաններում [4,5]:

Ախտորոշիչ հետազոտությունների կիրառմանն աջակցող ապացույցը կլինիկական վարմանը նպաստելու համար կարող է տարբեր լինել ավելի բարձր ռեսուրսների պայմաններում, օրինակ, այն ճանապարհորդի մոտ, ով գտնվում է համապատասխան բուժօգնության կամ ախտորոշման սահմանափակ հնարավորությամբ տարածքում [30]: Համապատասխան մանրէի անջատումը կօգնի ճիշտ հակաբակտերիալ բուժման նշանակմանը բակտերիալ վարակի դեպքում, և, ընդհակառակը, կօգնի խուսափել դրանց ավելորդ նշանակումից վիրուսային վարակների դեպքում: Չնայած որոշ դեպքերում կլինիկական նշանները օգնում են տարբերակել բակտերիալ վարակը պրոտոզոայինից, սակայն միայն դրանց վրա հիմնվել չի կարելի: Տարբեր հարուցիչների դեպքում ախտանիշները կարող են նմանվել կամ ծածկել մեկը մյուսին [31]. Չնայած ՃԼ-ը արագ ճանաչելու և ինքնաբուժելու նպատակով կատարված կրթական աշխատանքների բարելավմանն

ուղված ջանքերին, այդ մոտեցումն իրեն չի արդարացնում արտահիվանդանոցային լուծերի դեպքում [29]:

ՍՎԼԸՀ-ի ախտորոշման բազմապիսի մոտեցումները պահանջում են տարբեր ախտորոշիչ մեթոդներ՝ բակտերիաբանական ցանքս, նախակենդանիների հայտնաբերման համար՝ մանրադիտում, ներկումով կամ առանց ներկման իմունոֆլուորեսցենցիա, վիրուսների հայտնաբերման համար՝ էլեկտրոնային մանրադիտում կամ անտիգենի հայտնաբերման վրա հիմնված թեստերի կիրառում: Հարուցչի անջատումը կլինիկական լաբորատորիայում պահանջում է տարբեր միջավայրերի օգտագործում, սակայն ոչ բոլոր մանրէների ցանքսի համար է կիրառելի, հատկապես հակաբիոտիկների կիրառումից հետո: Բացի այդ, ցանքսը ժամանակատար է, տվյալները ստացվում են 48-72 ժամ անց [32]. Պատմականորեն, ցանքս կատարելու որոշումը կապված է եղել կղանքում լեյկոցիտների կամ լակտոֆերինի առկայության հետ [4,33]. Չնայած վերջինը դրական աճի ավելի զգայուն պրեդիկտոր է, սակայն հետագա հետազոտությունները ցույց են տվել, որ դրա իրականացման կարիքը ամենայն հավանականությամբ չկա:

Միկրոսկոպիան արդեն շուրջ 350 տարի է պարազիտոլոգիայի հիմնական ախտորոշիչ մեթոդներից է: Այս մեթոդի սահմանափակումներն են՝ ժամանակի սղությունը, մեծ փորձառնության անհրաժեշտությունը, զգայունության պակասը, վերարտադրելու անհնարինությունը [34].

Երբ աղիքային վիրուսները հայտնաբերվեցին որպես սուր վարակային լուծերի պատճառներ, առևտրային ախտորոշիչ թեստերը դեռևս անհասանելի էին: Էլեկտրոնային մանրադիտումը թանկ էր և ոչ միշտ հասանելի: ԻՖԱ-ն և շճաբանական մեթոդներն առկա էին, սակայն ունեին նույն սահմանափակումները [35]:

Վերջին մի քանի տարում տարատեսակ ախտորոշիչ մեթոդների ստեղծումը վերելք ապրեց: Ներկայումս հնարավոր է ցանքս-անկախ մոլեկուլյար մեթոդներով

միաժամանակ և արագ անջատել մի քանի հարուցիչներ, ներառյալ կլինիկական լաբորատորիաների ահամար ոչ շատ բնորոշները [36]:

Լուծով ընթացող հիվանդություններն ունեն հնարավոր պաթոգենների լայն տեսակներ, որոնց համար հատկապես հարմար է մուլտիպլեքսային մոլեկուլյար թեստավորումը: Որոշ հետազոտություններ փաստում են, որ մոլեկուլյար թեստավորումը ներկայումս առավելություն ունի այլ ախտորոշիչ մոտեցումների նկատմամբ: Այն կարող է տրամադրել հիվանդության պատճառագիտության ավելի համապարփակ գնահատում, այլ ախտորոշիչ թեստերի համեմատությամբ [Աղյուսակ 2]. Դրանք նաև արագ են, արդյունքը պատրաստ է լինում մի քանի ժամում [37]: Սակայն կան նաև թերություններ: Հարուցիչների հայտնաբերման գործում մոլեկուլյար մեթոդների կիրառումը կարող է անհասկանալի լինել, կապված մանրէային գենոմի մասին մեր սահմանափակ գիտելիքների հետ, չեն կարող տարբերակվել կենսունակ և անկենսունակ օրգանիզմները: Որպես հետևանք, միկրոբը կարող է հայտնաբերվել ոչ ախտածին մակարդակում: Հաշվի առնելով աղիքային ախտածիներին անախտանիշ կրության մեծ հաճախականությունը, դա կարող է խնդիր հանդիսանալ: Անակնկալ կերպով, մուլտիպլեքսային տեխնիկան ավելի հաճախ կապված է միքսո ինֆեկցիաների հայտնաբերման հետ, եւ յուրաքանչյուր պաթոգենի հարաբերական նշանակությունը կարող է անհասկանալի լինել [38–47]:

Նախքան բակտերիալ ցանքսը լիովին վերացվի, կարելի է հասկանալ, որ մուլտիպլեքսային մոլեկուլային ախտորոշիչ մեթոդները չեն տալիս նմուշներ, որոնք կարող են փոխանցվել հանրային առողջության լաբորատորիաներին: Ցանքս-անկախ մեթոդների համար վերցված նմուշները երբեմն չեն կարող մրցակից լինել ցանքսին՝ յուրահատուկ միջավայրի կամ նմուշառման պատճառով: Վերջապես, սանքս-անկախ մեթոդների վրա մեր խիստ հիմնավորվածությունը կարող է սահմանափակել ՍՎԼԸՀ-ի նոր հարուցիչների հայտնաբերման հնարավորությունները [26,48–51]: Ապագայում կարող է տրամադրվել կոմբինացված մոտեցում, երբ ցանքս-անկախ մեթոդով դրական արդյունքները կփոխանցվեն

հանրային լաբորատորիաներ ենթատիպավորման և զգայունության որոշման նպատակով: Երկրորդ նմուշի անհրաժեշտությունը կարող է ծագել օրինակ չոր կղանքի քերուկի դեպքում [52–54]:

Չնայած ամբողջ աշխարհում հակաբակտերիալ կայունության վերաբերյալ հետզհետե աճող տվյալներին, կլինիկական նկատառումներով զգայունության որոշումը հատկապես առանձին հիվանդների շրջանում հիմնավորված չէ: Սովորաբար հակաբակտերիալ թերապիայի էմպիրիկ նշանակման դեպքում, հատկապես ֆտորիսինոլոնների և մակրոլիդների տեսքով, անարդյունավետ բուժման հաճախականությունը շատ քիչ է [55–62]: Հակաբակտերիալ զգայունության որոշումը շարունակելու է կարևոր դեր ունենալ բռնկման պայմաններում և կայունության նոր մեխանիզմների ուսումնասիրություններ ոլորտում [63–65]:

### ***Բուժում***

*Օռալ ռեհիդրատացիա*

### ***Խորհուրդ***

**5. Սուր լուծ ունեցող տարեց անձանց և խոլերանման լուծ ունեցող ճանապարհորդներին այլ օռալ ռեհիդրատացիոն միջոցների հետ միաժամանակ խորհուրդ է տրվում օգտագործել բալանսավորված էլեկտրոլիտային լուծույթներ: Սուր լուծով կամ գաստրոէնտերիտով անհատների մեծամասնությունը կարող է պահպանել հեղուկների եւ աղի մակարդակը՝ հյութերի, խմիչքների, ապուրների եւ աղի չորահացերի օգտագործման միջոցով [խիստ խորհուրդ, ապացույցի միջին մակարդակ]:**

### ***Ապացույցի համառոտ ակնարկ.***

Նախորդ դարի ամենակարևոր ձեռքբերումներից մեկը բալանսավորված նատրիում-գլյուկոզա հեղուկների ստեղծումն էր, որը թույլ տվեց հասնել ջրի և էլեկտրոլիտների

առավելագույն աբսորբցիայի: Օռալ ռեհիդրատացիոն լուծույթների [ORS] կիրառությունը նվազեցրեց զարգացող երկրներում մանկական մահացությունը 50%-ով [66]: ORS-ի հիմնական արժեքը դրա կիրառությունն է զարգացող երկրներում վաղ մանկական հասակի ռեհիդրատացիայով երեխաների շրջանում: ORS-ի կիրառման խնդիրը լուծի տևողությունը կրճատելը չէ: ՃԼ-ի դեպքում ռեհիդրատացիան բնորոշ չէ և մահացու ելքը շատ հազվադեպ է: Մահացությունը ավելի բարձր է տարեցների շրջանում, ԱՄՆ-ում լուծի հետ կապված մահացության 80%-ը հանդիպում է հենց տարեցների շրջանում [67]: Երեխաներին, ՃԼ-ով տարեցներին և ցանկացած անձի, ով ունի խոլերանման լուծ ցուցված է ORS-ի կիրառում և կլինիկական գնահատում: ՃԼ-ով ոչ տարեց մեծահասակների բուժման նապտակը հիմնականում ախտանիշների արագ հետզարգացումն է և ակտիվության վերականգնումը: ՃԼ-ով մեծահասակների վարման նախորդ հետազոտությունները չկարողացան հայտնաբերել լոպերամիդով բուժվող հիվանդների մոտ բալանսավորված ORS թերապիայի կլինիկական կամ լաբորատորական օգտակարությունը [68]: ՃԼ-ով մեծահասակների մեծ մասին ORS անհրաժեշտ չէ, քանի որ նրանք կարող են պահպանել ջրա-էլեկտրոլիտային բալանսը ապուրների, հյուֆերի, կարբոհիդրատների օգտագործմամբ [69]: Մեծ տարածում ունեցող միներալիզացված հեղուկները գրեթե չեն պարունակում նատրիում և կալիում, այն դեպքում երբ բնական հյուֆերը, օրինակ խնձորի հյուֆը, պարունակում են մեծ քանակով կալիում և կարբոհիդրատներ, բայց քիչ քանակով նատրիում [70,71]: Լուծ ունեցող ճանապարհորդները պետք է խիստ պահպանեն սննդակարգը և հետևեն միզարտադրությանը և լորձաթաղանթների խոնավությանը:

Սուր լուծի դեպքում բալանսավորված ORS կարելի է ձեռք բերել նաև դեղատանը՝ պատվիրելով նատրիում 60–75 mEq/l և գլյուկոզա 75–90 mmol/l [72]: Սպորտային խմիչքները, չնայած չեն կարող առանձին կերպով բուժել, սակայն մասնակիորեն կարող են վերականգնել նատրիումի և կալիումի քանակը: Անհրաժեշտ են նոր հետազոտություններ, ճանապարհորդների համար օպտիմալ ընպելիքները հայտնաբերելու համար [73, 74]:

## *Պրոբիոտիկներ և պրեբիոտիկներ*

### ***Խորհուրդ***

**6. Մեծահասակների շրջանում սուր լուծերի բուժման նպատակով պրեբիոտիկների և պրոբիոտիկների նշանակումը ցուցված չէ, բացառությամբ հակաբիոտիկների օգտագործման հետ ասոցացված դեպքերի [խիստ խորհուրդ, ապացույցի միջին մակարդակ]:**

### ***Ապացույցի համառոտ ակնարկ.***

Քանի որ մարդկային միկրոբիոմի մասին մեր գիտելիքները զարգանում են, հետաքրքրություն են ներկայցնում ոչ պաթոգեն բակտերիաների կամ դրանց աճը խթանող նյութերի կիրառման հնարավորությունները [75]: Պրոբիոտիկները բնորոշվում են որպես կենդանի միկրոօրգանիզմներ, որոնք ադեկվատ չափաբաժիններով նշանակման դեպքում ունեն դրական ազդեցություն մարդու օրգանիզմի վրա: Որպեսզի միկրոօրգանիզմը համարվի պրոբիոտիկ, այն պետք է լինի ոչ պաթոգեն, կենդանի, կայուն թթվային միջավայրի նկատմամբ, ադիեզվի թիրախ էպիթելյալ բջջին, գոյատևի ստամոքս-աղիքային տրակտում, արտադրի հակամիկրոբային նյութեր, և ազդի նյութափոխանակության վրա [76]: Պրոբիոտիկների ազդեցության մեխանիզմներից մեկը կոլոնիզացիոն ռեգիստենտությունն է, այսինքն կանխում և արգելակում է պաթոգեն հարուցիչների ադիեզիան՝ առաջացնելով իմուն պատասխան [77]:

Պրեբիոտիկները անմարսելի սննդային ինգրիդիենտներ են, որոնք ֆերմենտացվում են աղիներում և խթանում են օգտակար բակտերիաների աճը, մասնավորապես բիֆիդո-, լակտոբակտերիաների [78]: Վերջիններս կարևոր դեր ունեն աղիների էկոֆիզիոլոգիայում, ինչպես նաև վարակների և լուծի կանխման գործընթացում [79,80]:



Երբ պրոբիոտիկները կոմբինացվում են պրոբիոտիկների հետ կոչվում են սինբիոտիկներ: Կենդանիների մոդելի վրա դրանք ցուցաբերել են արդյունավետություն [81]. Հետևաբար տեսականորեն դրանք կարող են արդյունավետ լինել վարակային լուծերի բուժման համար [82]: 2010թ.-ին Կոհրենյան համակարգային վերլուծությունը տվյալներ հրատարակեց այս թեմայով [83], որտեղ ուսումնասիրվել էր 63 ՊԲՎՓ և քվազի-ՊԲՎՓ հետազոտությունների արդյունքներ ՍՎԼԸՀ-ի դեպքում պրոբիոտիկների արդյունավետության վերաբերյալ համեմատած պլացեբոյի կամ չբուժման հետ:

Նկարագրվում են հետազոտություններ, որոնք ներառում են երկու առանձին պրոբիոտիկներ՝ *Enterococcus* LAB SF68 և *Sacchromyces boulardii* [84–87]: Հետազոտություններում դիտվել է որոշակի արդյունավետություն, այնուամենայնիվ անվտանգության վերաբերյալ միայն տեսական գիտելիքները սահմանապակում են դրանց լայն կիրառությունը [90]. Մեկ այլ հետազոտությունում *S. boulardii* չի ցուցաբերել որևէ էական արդյունավետություն պլացեբոյի համեմատությամբ [89]:

Հիմնվելով ապացուցողական տվյալների վրա, ներկայումս չկան բավական հիմքեր մեծահասակ սուր լուծ ունեցող պացիենտին որևէ պրոբիոտիկի նշանակման համար: Չնայած կապված *Enterococcus* LAB SF68-ի հետ դիտվել է վիճակագրորեն հավաստի դրական արդյունք, սակայն հետազոտության հետերոգենությունը թույլ չի տալիս տարածել այդ արդյունքը հանրության վրա: Վերջերս հրատարակվել են երեխաների շրջանում պրոբիոտիկների նշանակման արդյունավետությունը փաստող տվյալներ [91]:

Եզակի հետազոտությունում նկարագրվել է պոլիֆենոլի հիմքով պրոբիոտիկով սուր լուծի բուժում երեխաների շրջանում Նիկարագուայի բժշկական կենտրոնում [92]: Այդ հետազոտությունում դիարեայի դեպքի բնորոշում ներառված չի եղել [օրինակ հաճախականություն կամ տևողություն], միևնույն ժամանակ ընտրանքում չընդգրկելու չափորոշիչներ են եղել բարձր տենդը, փսխումը, ծանր ջրազրկումը և արյունային լուծը: Բուժումը հավաստիորեն կրճատել է լուծի տևողությունը

համեմատած պլացեբո խմբի հետ [պրոբիոտիկ՝ 10.5 ժ ընդդեմ պլացեբո: 54 ժ,  $P < 0.0001$ ]: Քանի որ հետազոտությունում բացակայում են կարևոր մեթոդաբանական նկարագրություններ և դեղի ազդեցության մեխանիզմներ, անհրաժեշտ են առավել մանրակրկիտ և լավ կլինիկական դիզայնով ուսումնասիրություններ: Որոշ հետազոտություններ փաստում են պրոբիոտիկների դրական ազդեցության մասին հակաբիոտիկների հետ ասոցացված լուծի բուժման մեջ [93, 94]: Այս առումով նույնպես անհրաժեշտ են ավելի լայնամաշտաբ հետազոտություններ:

*Ոչ հակաբակտերիալ բուժում*

### **խորհուրդ**

7. Բիսմուտի սուբսալիցիլատներ [BSSs] կարող են նշանակվել դեֆեկացիայի հաճախականության հսկման նպատակով, և կարող են օգնել ճանապարհորդներին լինել ավելի ֆունկցիոնալ թեթև և միջին ծանրության հիվանդության դեպքում [խիստ խորհուրդ, ապացույցի բարձր մակարդակ]:
8. ՃԼ համար հակաբիոտիկ ստացող հիվանդներին Լոպերամիդով օժանդակ բուժում կարող է նշանակվել՝ լուծի տևողության կրճատման և լավանալու հնարավորությունները մեծացնելու նպատակով [խիստ խորհուրդ, ապացույցի միջին մակարդակ]

### **Ապացույցի համառոտ ակնարկ.**

Ոչ ծանր, ոչ խոլերանման լուծով հիվանդներին յուրահատուկ բուժում անհրաժեշտ չէ: Ոչ հակաբակտերիալ հակադիարեային պրեպարատները կարող են նվազեցնել լուծի հաճախականությունը, ինչը կօգնի մարդկանց արագ վերականգնվել: Դրանք հակասեկրետոր և հակապերիստալտիկ պրեպարատներն են: Աղիների սեկրեցիան ջրային լուծի՝ ներառյալ ՃԼ-ի հիմնական պատճառն է: Ապացուցված

արդյունավետությամբ հակասեկրետոր պրեպարատներն են [95], զալդարիդ մալեատ [96], և կլոֆեթեմել [97]. BSS-ի սալիցիլատային բաղադրիչն ունի հակասեկրետոր, հակադիարեային ազդեցություն [98]. BSS նվազեցնում է կղազատումը ~40% [95]. Կրոֆեթեմելը ցիստիկ ֆիբրոզի տրանսմեմբրանային ռեգուլատոր քլորիդային կանալների արգելակիչ է, այն արդյունավետ է դիարեայի որոշ տեսակների դեպքում՝ ներառյալ ՃԼ և ՁԻԱՀ-ասոցացված լուծը [99]: Զալդարիդը կալմոդուլին-արգելակիչ հակասեկրետոր պրեպարատ է՝ կալցիումի ներբջջային կոնցենտրացիաների հետ կապված [100]: Այն զգալի նվազեցնում է կղազատման հաճախականությունը ՃԼ-ի դեպքում պլացենթայի համեմատությամբ [96,101,102]: Ռասեկադոտրիլը, յուրահատուկ էնկեֆալինազայի ինհիբիտոր է, որն արգելակում է ցիկլիկ նուկլեոտիդների սեկրետոր մեխանիզմները առանց ազդելու աղիների մոտորիկայի վրա [103] և հաջողությամբ կիրառվում է մանկական պրակտիկայում լուծերի դեպքում [104]: Չնայած ռասեկադոտրիլը ցուցաբերել է լրպերամիդին հավասար արդյունավետություն մեծահասակների շրջանում էնդեմիկ լուծերի բուժման ժամանակ [105], այնուամենայնիվ այս հակադիարեային պրեպարատը կարիք ունի հետագա ուսումնասիրության լուծի տարբեր դրսևորումների դեպքում: Որպես խիստ հակասեկրետոր պրեպարատ միայն երկուսն են հաստատվել ԱՄՆ Սննդի և դեղորայքի ադմինիստրացիայի կողմից՝ BSS-ը սուր լուծերի բուժման համար և կրոֆեթեմելը ՄԻԱՎ-ասոցացված լուծերի դեպքում: Սուր լուծերի բուժման համար BSS-ի ցուցված դոզան 30 մլ [525 մգ] հեղուկ ձևաչափով կամ 2 հաբ [263 մգ յուրաքանչյուր հաբում] ծամելու համար յուրաքանչյուր 30-60ր մեկ, չգերազանցելով 24 ժամում 8 հաբը: Դեղի օգտագործումից լեզուն և կեղտը կարող են սև գույն ստանալ բիսմութի պարունակության պատճառով:

Սուր դիարեաների բուժման համար կիրառվող հիմնական հակապերիստալտիկ պրեպարատները լրպերամիդը և դիֆենոքսիլատն են: Սրանցից լրպերամիդն ավելի կիրառելի է, քանի որ ունի թույլ կենտրոնական օպիատային ազդեցություն: Դիֆենոքսիլատի մյուս բացասական կողմն այն է, որ այն պարունակում է ատրոպին, որը չունի հակադիարեային ազդեցություն և կարող է առաջացնել կողմնակի

ազդեցություններ: Լուպերամիդն ազդում է 2 մեխանիզմով՝ առաջինը և ամենակարևորը՝ առաջացնում է աղիների սեգմենտար կրճատումներ, ինչը դանդաղեցնում է ներլուսանցքային հեղուկի տեղաշարժը և մեծացնում է աբսորբցիան [106], երկրորդը՝ արգելակում է կալմոդուլինի արտադրությունը՝ նվազեցնելով լորձաթաղանթի սեկրեցիան [107]: Այսպիսով, լուպերամիդի հակադիարեային ազդեցությունը պայմանավորված է լորձաթաղանթի սեկրեցիայի ուղղակի և անուղղակի ընկճմամբ և ծարժողունակության նվազմամբ: Համեմատական ՊԲՎՓ հետազոտությամբ ցույց է տրվել, որ ՃԼ-ի դեպքում լուպերամիդը նվազեցնում է կղազատման հաճախականությունը՝ համեմատած BSS-ի հետ [108] և կրճատում է լուծի տևողությունը ինչպես երեխաների [109] այնպես էլ մեծահասակների շրջանում [110]: Մեծահասակների շրջանում սուր լուծի բուժման համար լուպերամիդի ցուցված դոզան հետևյալն է՝ 4մգ սկզբնական, ապա 2մգ ջրային կղազատման դեպքում՝ չգերզանցելով օրեկան 8 մգ-ը: Լուպերամիդը չի տրվում 48 ժամից ավել Լուպերամիդի ամենանշանակելի կիրառությունը ՃԼ-ի ինքնաբուժման մեջ կիրառությունն է, երբ հակաբիոտիկի հետ զուգահեռ, այն քչացնում է կղազատման հաճախականությունը [29,111]. Սուր լուծի լուպերամիդով բուժման հիմնական հետևանքներից է փորկապությունը: Դրանից խուսափելու համար ահնրաժեշտ է կիրառել լուպերամիդի ցած դոզաներ:

Հակապերիստալտիկ դեղերի կիրառության հետ կապված բարդություններն են՝ աղիների տոքսիկ դիլատացիա և ձգձգվող ընթացք՝ բակտերիալ բորբոքման դեպքում [112,113], չնայած դրանք շատ հազվադեպ են հանդիպում և կապակցված են խիստ բորբոքային բակտերիալ գործոնների հետ: Երբ այդ բորբոքային հիվանդությունները բուժվում են նաև հակաբիոտիկներով, այդ բարդությունները շատ հազվադեպ են հանդիպում [113]:

Ադսորբող պրեպարատները, ինչպիսիք են կաոլին, պեկտին, չարկոալ և ատապուլգիտ, դրական են ազդում միայն կղանքի կոնսիստենցիայի վրա, սակայն չեն կրճատում կղազատման հաճախականությունը և չեն կրճատում տևողությունը, հետևաբար ցուցված չեն [114,115]:

## *Հակաբակտերիալ բուժում*

### *խորհուրդ*

9. Ապացույցները խորհուրդ չեն տալիս կիրառել էմպիրիկ հակաբակտերիալ բուժում սուր վարակային լուծերի դեպքում, բացառությամբ ՃԼ-ի, երբ լուծի բակտերիալ ծագման բարձր հավանականությունը բավական է հակաբիոտիկների կողմնակի ազդեցությունների փաստարկման համեմատ [խիստ խորհուրդ, ապացույցի բարձր մակարդակ]:
10. Հակաբիոտիկների կիրառությունը արտահիվանդանոցային լուծերի դեպքում չպետք է խրախուսվի, քանի որ համաճարակաբանական տվյալները փաստում են, որ արտահիվանդանոցային լուծերի մեծ մասն ունի վիրուսային ծագում [նորովիրուս, ռոտավիրուս և ադենովիրուս] և հակաբիոտիկների կիրառությունը չի կրճատում հիվանդության տևողությունը [խիստ խորհուրդ, ապացույցի շատ ցածր մակարդակ]:

### ***Ապացույցի համառոտ ակնարկ.***

Հակաբակտերիալ պրեպարատները խստորեն ցուցված են ՃԼ-ի դեպքում [Աղյուսակ 4 նշանակման ձևաչափ]: Բազմաթիվ հետազոտություններով ապացուցվել է, որ հակաբիոտիկները կրճատում են ծանր և միջին ծանրության ՃԼ-ի տևողությունը մինչև 24ժ [116]: Արդյունավետության հիմնական ցուցանիշ հետազոտությունների մեծ մասում հանդիսացել է բուժման սկզբից մինչև վերջին ջրիկ կղանքն ընկած ժամանակահատվածի ուսումնասիրությունը [117]: Հակաբակտերիալ պրեպարատներ նշանակումը նվազեցնում են ՃԼ-ի տևողությունը 1-3 օրով համեմատած պլացեբոյի և չբուժման հետ համեմատած [118–121], և հակաբիոտիկի և լուպերամիդի նշանակումը նվազեցնում է հիվանդության հետագա տևողությունը [111]: Ֆտորիսինոլոնները, ինչպիսիք են ցիպրոֆլոքսացինը և լևոֆլոքսացինը, ընտրության պրեպարատ են ՃԼ-ի շատ դեպքերում [119,120,122], սակայն դրանց հանդեպ աճող կայունությունը կարող

է փոխել այդ մոտեցումները [123–125]: Բացի այդ, ապացուցված է, որ շատ կամպիլոբակտերներ կայուն են ֆտորիսինոլոնների նկատմամբ, և այդ պատճառով ընտրության պրեպարատ են մակրոլիդները, օրինակ՝ ազիտրոմիցին [126]: Ազիտրոմիցինն ավելի արդյունավետ է ֆտորիսինոլոնների համեմատությամբ Թայլանդ մեկնածների շրջանում, հավանաբար այդ տարածքում կամպիլոբակտերի մեծ տարածման հետ կապված [127]: Ինը ՊԲՎՓ կլինիկական հետազոտության և Կոհրենյան վերլուծության արդյունքներով [116,119,122,128–131] ֆտորքինոլոնների կիրառումը ՃԼ-ի դեպքում նվազեցնում է հիվանդության տևողությունը պլացեբոի համեմատությամբ, այդ հետազոտություններում որևէ լուրջ կողմնակի ազդեցություններ չեն դիտվել, այնուամենայնիվ, ըստ գրականության տվյալների, ֆտորքինոլոնների օգտագործումը կապված է *Clostridium difficile* վարակի հետ, տենդոնոպաթիաների և արթրոպաթիաների ռիսկի հետ [132]: Բոլոր հակաբիոտիկների դեպքում թե միանվագ կիրառումը, թե եռօրյա նշանակումը հանգեցրել է սիմպտոմների հետզարգացման: Հետազոտությունները ցույց են տվել, որ միանվագ կիրառումը նույնքան արդյունավետ է, որքան եռօրյան, ՃԼ-ի ոչ ինվազիվ պաթոգենների դեպքում [120,121]: Եռօրյա բուժումը ցուցված է, երբ առկա է տենդ և դիզենտերիա: *Shigella dysenteriae*-ով հարուցված հիվանդությունը բացառություն է, քանի որ 5-օրյա բուժումը հավաստիորեն արդյունավետ է եռօրյա կամ միանվագ բուժումից [125]: Ամպիցիլինի և սլֆամետաքսազոլ/տրիմետոպրիմի նկատմամբ աճող կայունության պատճառով ընտրության պրեպարատ հանդիսանում է ազիտրոմիցինը [133,134]. Ի դեպ, վերջերս, ԱՄՆ-ում հայտնաբերվել են ազիտրոմիցինի նկատմամբ *Shigella sonnei*-ի կայուն շտամեր [61]:

Չնայած չկան հետազոտություններ, որոնք համեմատում են ՃԼ-ի դեպքում ազիտրոմիցինի արդյունավետությունը պլացեբոյի համեմատությամբ, սակայն կան 4 ՊԲՎՓ հետազոտություններ, որոնք համեմատում են ազիտրոմիցինը ֆտորքինոլոնների հետ [118,127,135,136]: Բուժում ստացող երկու խմբերի մեջ տարբերություններ չեն դիտվել: Մեքսիկո ճանապարհորդող մեծահասակ ուսանողների շրջանում 1000մգ ազիտրոմիցինը համադրելի է եղել 500մգ

լնֆլոքսացինին հիվանդության տևողության կրճատման առումով [22.3 ընդդեմ 21.5 ժ] [118]: Երեք հետազոտությամբ ազիտրոմիցինը եղել է նույնքան արդյունավետ, որքան ֆտորքինոլոնները Թայլանդի և Մեքսիկոյի ՃԼ-ի բուժման համար [118,125,127]: Ազիտրոմիցինը նաև արդյունավետ է ֆտորքինոլոն ռեզիստենտ կամպիլոբակտերիոզի [125,137], շիգելաների և ոչ ինվազիվ *Escherichia coli* բուժման համար [137,138]: Ազիտրոմիցինի նկատմամբ կայունության հետազոտությունները կատարվում են, սակայն արդյունքները դեռ ամփոփված չեն: Մեկ հետազոտություն ցույց է տվել, որ ազիտրոմիցինը արդյունավետ է ՃԼ-ի պաթոգենների նկատմամբ, սակայն մեկ այլով ցույց է տրվել, որ վերջին տասնամյակներում անհրաժեշտ է մեծացնել ազիտրոմիցինի դոզան դիարոզեն *E. coli* -ի դեպքում բակտերիոցիդ ազդեցության հասնելու համար [26]: *In vitro* հետազոտությունները Նեպալում և Թայլանդում ցույց են տվել *Campylobacter*-ի իզոլատների աճող ռեզիստենտություն ազիտրոմիցինի հանդեպ սակայն կլինիկական ձախողումներ չեն դիտվել [139]:

Ռիֆաքսիմինը, ոչ ադսորբող ռիֆամիցինի ածանցյալ, արդյունավետ է դիարոզեն *E. coli*-ի բուժման համար, որն արևմտյան կիսագնդի ամենից հաճախ հանդիպող բակտերիան է [140]: Երկու հետազոտությունում, որտեղ ռիֆաքսիմինը համեմատվել է պլացեբոյի հետ, ՃԼ-ի դեպքում ռիֆաքսիմին ստացողներն ավելի արագ են բուժվել: EAEC-ի հետ ասոցացված լուծի դեպքում 200մգ օրը 3 անգամ ռիֆաքսիմինի նշանակումը հավաստիորեն արդյունավետ է պլացեբոյի համեմատությամբ [22 ընդդեմ 72 ժ] [141]: Երկու հետազոտությունում ուղղակիորեն համեմատվել է ռիֆաքսիմինը ցիպրոֆլոքսացինի հետ: Բուժման կամ ձախողման առումով որևէ նշանակալի տարբերություն չի դիտվել [142,143]: Այնուամենայնիվ, ինվազիվ լուծով ենթախմբում դիտվել է ռիֆաքսիմինով բուժման օգուտի նվազում [131]:

Թեպետ ճանապարհորդների շրջանում ՃԼ-ի անհատական ինքնաբուժումը 1980-ական թվականներից ի վեր տարածված է եղել, սակայն ներկայումս մտահոգություններ կան ՃԼ-ի էմպիրիկ հակաբակտերիալ թերապիայի կիրառման վերաբերյալ: Առաջինը՝ հակաբակտերիալ պրեպարատները բարդացնում են Shiga-like տոքսին արտադրող բակտերիաներով հարուցված հիվանդությունների ընթացքը՝

բարձրացնելով ՀՈՒՀ-ի ռիսկը: Դա հաճախ բնորոշ է երեխաներին, սակայն մեծահասակների շրջանում մետա-անալիզի արդյունքները չեն գտել կապ հակաբիոտիկների կիրառման և *E. coli* O157:H7-ով հարուցված հեմոկոլիտի դեպքում ՀՈՒՀ-ի զարգացման միջև [144]: Մյուսը՝ ոչ տիֆային սալմոնելլաներով հարուցված հիվանդությունների դեպքում հակաբիոտիկների նշանակումը երկարացնում է բակտերիակրոության տևողությունը, դա ցույց է տրվել մետա-անալիզով [144]: Միևնույն ժամանակ սա չի կարող խիստ արգումենտացիա լինել հակաբիոտիկների չնշանակման [145]:

Մեկ այլ, թերեւս ավելի օրինականացված մտահոգությունն այն է, որ հակաբիոտիկներով բուժումը կփոխի աղիների միկրոբիոտան: Դա կարող է հանգեցնել *C. difficile*-առցացված լուծի կամ կոլիտի [132,145]: Վերջին հետազոտություններում *C. difficile*-առցացված կոլիտը պայմանավորված էր եղել ցիպրոֆլոքսացինով բուժման հետ [146]: Այնուամենայնիվ, դա հաճախ հանդիպող ելք չի: Մենք հետզհետե համոզվում ենք, որ անհատի միկրոբիոտայի փոփոխությունները կարող են կապված լինել որոշակի ուղղություններով միջազգային ճանապարհորդության հետ: Վերջերս արված հետազոտությամբ պարզվել է, որ ՃԼ-ի հակաբիոտիկներով ինքնաբուժման հետևանքով բարձրանում է կայուն  $\beta$ -լակտամազա արտադրող էնտերոբակտերիաներով և կաբապենեմազա արտադրող էնտերոբակտերիաներով կոլոնիզացիայի հավանականությունը: Այդ հետազոտությունում ճանապարհորդությունն ինքնին բարձրացնում է այդ հարուցիչներով կոլոնիզացիայի ռիսկը 21%-ով, սակայն հակաբակտերիալ բուժում ստացածների մոտ այդ տոկոսը խիստ բարձր է՝ 80%, ինչը հնարավորություն է ստեղծում կայուն բակտերիաների տարածման զարգացած երկրներում [147]: Միկրոբիոտայի փոփոխությունները կարող են ունենալ տարբեր հետևանքներ, սակայն դրանք դեռ քննարկման խնդիր են [148]. Դրա հետ կապված ՃԼ-ի բուժման և չբուժման առավելությունները և թերությունները քննարկման փուլում են:

Սուր լուծ առաջացնող սպեցիֆիկ պարազիտային հիվանդությունների հակամիկրոբային բուժման անհրաժեշտության ապացույցը հստակ է՝



մետրանիդազոլ, տինիդազոլ կամ նիտազոքսանիդ լյամբլիոզի համար, մետրանիդազոլ կամ տինիդազոլ *Entameba histolytica*-ի համար, նիտազոքսանիդ Cryptosporidiosis-ի համար, տրիմետոպրիմ/սուլֆամետաքսազոլ Cyclosporiasis կամ Cystisporiasis-ի համար, ալբենդազոլ *Enterocytozoon bienusi*-ի համար, կամ յոդոքինոլ *Dientameba fragilis*-ի համար [149–155]: Ժամանակակից ախտորոշիչ մեթոդների ներդրումը սպեցիֆիկ պարազիտար հիվանդությունների ախտորոշումը դարձնում է ավելի արագ և հասանելի՝ նպաստելով ճիշտ հակամիկրոբային բուժման նշանակմանը:

### **Առկա ախտանիշների գնահատում**

#### *Խորհուրդ*

11. Պերսիստող լուծի դեպքում [14-30 օր] սեռոլոգիական և կլինիկական լաբորատոր հետազոտություններ անհատների շրջանում ցուցված չէ [խիստ խորհուրդ, ապացույցի շատ ցածր մակարդակ]:
12. Պերսիստող ախտանիշներով [14-30 օր] և կղանքի հետազոտության բացասական արդյունքներով հիվանդներին էնդոսկոպիկ հետազոտություն ցուցված չէ [խիստ խորհուրդ, ապացույցի շատ ցածր մակարդակ]:

### **Ապացույցի համառոտ ակնարկ.**

Համառոտ ախտանիշներով հիվանդների գնահատման ժամանակ անհրաժեշտ է մանրամասն եւ ուղղորդված հիվանդության պատմություն հավաքել: Հարցերը պետք է ընդգրկեն ճանապարհորդական անամնեզը, սկզբնական ախտանիշների բնույթը, սկիզբը [սուր թե աստիճանական], տևողությունը, աղիքային համախտանիշի բնույթը և հաճախականությունը՝ լուրձի և արյան առկայություն, կղանքի ծավալը, նքոցների առկայությունը, կապը որոշակի սննդի օգտագործման հետ, հակաբիոտիկների կիրառությունը, այլ ախտանիշների առկայություն՝ սրտխառնոց, փսխում, տենդ, քաշի

կորուստ և այլն: Այս հարցերի պատասխանները կարող են օգնել հետազա  
ուսումնասիրություններին [156]: Ձգձգվող ախտանիշներով հիվանդների շրջանում  
[14-30 օր], կլինիկական լաբորատոր հետազոտությունների և էնդոսկոպիայի դերը  
հստակ չէ և կախված է ենթադրյալ ախտորոշումից: Ձգձգվող ախտանիշներով  
հիվանդների հետազոտության պլանը անպայման կերպով պետք է ընդգրկի հարցի  
որոշման ուսումնասիրություն: Ցանքսը և միկրոսկոպիան համարվում են առաջնակի  
մեթոդներ, սակայն դրանց սահմանափակ ինֆորմատիվության պատճառով պետք է  
լրացվեն նորագույն մեթոդներով: Նույնիսկ այնպիսի նոր և զգայուն մեթոդներ,  
ինչպիսիք են ԻՖԱ-ն և իմունոֆլուրեսցենցիան կարող են չտարբերել օրինակ  
*Entamoeba histolytica*-ի պաթոգեն շտամերը *Entamoeba dispar*-ի ոչ պաթոգեն  
շտամերից [157]: Աղիքային մանրէների անջատման գործում ՊՇՌ-ն ավելի զգայուն  
է, քան ցանքսը, միկրոսկոպիան կամ անտիգենների հայտնաբերումը [158-160]:  
Հետազոտություններում ցույց է տրվել, որ ՊՇՌ-ն 22 անգամ բարձրացնում է  
*Cryptosporidium* Giardia-ի հայտնաբերման հավանականությունը՝ համեմատած  
միկրոսկոպիայի հետ [161,162]:

Կոլոնոսկոպիան պետք է ներառվի պերսիստող լուծով հիվանդների ախտորոշման  
պլանում: Վերջերս կատարված հետազոտությունում տրոպիկական երկրներից հետ  
